

ԿԱՐԾԻՔ

Դավիթ Կարենի Պողոսյանի «Մետաղական հանքավայրերի շահագործման բաց եղանակից ստորգետնյա եղանակին անցման տեխնոլոգա-կազմակերպչական արդյունավետ լուծումների մշակումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված ՀԱՊՀ-ին առնթեր 031 մասնագիտական խորհրդին «Օգտակար հանածոների հանքավայրերի մշակում և շահագործում» (դասիչ ԻԴ.02.01) մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հանքային հումքը սահմանափակ է և չվերականգնվող լինելու հանգամանքը տարեց տարի հանքարդյունահանող ընկերություններին ստիպում է ավելի արդյունավետ օգտագործել իրենց տրամադրված օգտակար հանածոների պաշարները: Հանքավայրերի բաց եղանակով շահագործման ժամանակ կիրառվող արդի տեխնիկատրանսպորտային միջոցները հնարավորություն են ընձեռում հանքավայրերի արտադրողականության բարձրացման միջոցով իջեցնել ընդերքից օգտակար հանածոների արդյունահանման ինքնարժեքը՝ լավարկելով հանքավայրի շահագործման տնտեսական ցուցանիշները:

Սոթքի ոսկու հանքավայրի դեպքում, որը ներկայացված է գերիզոր գառիթափ երակային գոտիներով և հանքայնացված դայկայով ու գաբրոզանգվածով, բարակ երակներով և երականման մարմիններով, որոնք ունեն տեղադրման զգալի խորություն, անկախ բաց լեռնային աշխատանքներում կիրառվող տեխնիկատրանսպորտային միջոցներից և դրանց բարձր արդյունավետությունից, միևնույն է որևէ հորիզոնից հետո ստորգետնյա լեռնային աշխատանքներին անցումը անխուսափելի է: Ուստի այդ խնդրի լուծման ժամանակ, թափոնային պոչանքների տեղավորմամբ, հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակը, որի էությունը կայանում է հզոր գառիթափ երկարաձգված հանքամարմինների ըստ խորության երեք հարկով մշակումը, կարող է էականորեն նպաստել հանքավայրի շահագործման տնտեսական արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանը:

Թափոնային պոչանքների տեղավորմամբ՝ հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակի կիրառական նշանակությունը անհնար է պարզել առանց դրա կառուցվածքային տարրերի սահմանային թույլատրելի պարամետրերի հիմնավորման:

Առաջարկվող եղանակի կառուցվածքային գլխավոր տարրերից է հանդիսանում խցի լայնությունը, որից էլ կախված է մշակման համակարգի սյուս կառուցվածքային տարրի՝ պատ-դիագրամաների բետոնի ժամանակավոր դիմադրությունը: Ուստի դրանց միջև օպտիմալ կախվածության հայտնաբերումը նպաստում է առաջարկվող մշակման համակարգի հաջող կիրառմանը:

Սոթքի ոսկու հանքավայրի դեպքում, որը բնութագրվում է հանքաքարի և կողային ապարների ցածր կառուցվածքային և, որտեղ երկրամեխանիկական հաշվարկներով ապացուցվել է մշակված տարածության պահպանման անհրաժեշտությունը՝ թափոնային պոչանքների տեղավորմամբ՝ հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակի կառուցվածքային տարրերի օպտիմալ պարամետրերի հիմնավորումը կարող է չափազանց մեծ ազդեցություն ունենալ հանքավայրի հաշվեկշռային պաշարների, շահութաբերության և այլ կարևորագույն ցուցանիշների վրա՝ ապահովելով ընդերքի առավել ռացիոնալ յուրացման հնարավորությունը:

Վերը շարադրվածից հետևում է, որ թափոնային պոչանքների տեղավորմամբ, հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակի տեխնոլոգիական, դրա կառուցվածքային տարրերի սահմանային թույլատրելի ու օպտիմալ պարամետրերի հիմնավորումը, ինչպես նաև Սոթքի ոսկու հանքավայրի համակցված մշակման դեպքում բացահանքի և ստորգետնյա հանքի սահմանի որոշումը, որոնք միտված են Սոթքի ոսկու հանքավայրի ռացիոնալ շահագործման ապահովմանը՝ չափազանց արդիական են և կարող են ունենալ կիրառական մեծ նշանակություն և պահանջարկ:

Ատենախոսությունը բացկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից՝ 90 անվանմամբ և շարադրված է 111 համակարգչային էջի վրա:

Ատենախոսության առաջին՝ «ՍՈԹՔԻ ՈՄԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ», գլխում նկարագրվել են հանքավայրի շրջանի աշխարհագրատնտեսական պայմանները, հանքավայրի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները և բերված են տեղեկություններ օգտակար հանածոյի և բաղադրիչների պաշարների վերաբերյալ:

Վերը նշված երկրաբանական տեղեկատվության վերլուծության արդյունքում տրվել է հանքավայրի լեռնաերկրաբանական առանձնահատկությունների ընդհանուր

մակցված մշակման դեպքում բացահանքի սահմանային խորության հիմնավորման մեթոդաբանությունը, ինչպես նաև ադրադարձ է կատարվել է ՀՀ ընդերքօգտագործման արդի վիճակին և բնապահպանական խնդիրներին:

Մեթոդաբանության ուսումնասիրման արդյունքում, հեղինակը իրավացիորեն եզրահանգել է, որ հանքավայրերի համակցված եղանակով շահագործման դեպքում բաց և ստորգետնյա լեռնային աշխատանքների միջև օպտիմալ սահմանի որոշումը նպատակահարմար է իրականացնել սահմանային և եզրագծային մակաբացման գործակիցների համատարության հիման վրա:

Չորրորդ՝ «ՀԱՆՔԱՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԵՂԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ», գլխում տրվել է, թափոնային պոչանքների տեղավորմամբ, հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակի տեխնոլոգիական և հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակի կառուցվածքային տարրերի սահմանային թույլատրելի ու օպտիմալ պարամետրերի հիմնավորումը, որոշվել է, թափոնային պոչանքների տեղավորմամբ, Սոթքի ոսկու հանքավայրի համակցված մշակման դեպքում բացահանքի և ստորգետնյա հանքի սահմանը:

Աշխատանքում տրված հիմնավորումներից առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ սկզբունքորեն հնարավոր է թափոնային պոչանքների տեղավորմամբ հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակի ստեղծումը, որը կհանգեցնի բացահանքի հատակից հանքամարմնի տարածմամբ կախված և պառկած կողերում երկաթբետոնե պատերի, հանքակուտակի տարածմանը խաչող ուղղությամբ ուղղաձիգ բետոնե պատ-դիաֆրագմաների ստեղծմանը և կրող պատերի պաշտպանության տակ բացահանքի հատակից հորատված վարընթաց զուգահեռ հորատանցքերով ուղղաձիգ շերտերի պոկմանը:

Ինչ վերաբերում է թափոնային պոչանքների տեղավորմամբ հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակի ստեղծման դեպքում կիրառվող խցերի լայնությունը, ապա երկրամեխանիկական հաշվարկներով և խցերի լայնությունից կախված շահույթի կախվածության գրաֆիկի մշակմամբ որոշվել է խցերի օպտիմալ լայնությունը:

Մակաբացման սահմանային և եզրագծային գործակիցների հավասարության պայմանից էլնելով հիմնավորվել է, որ բաց և ստորգետնյա լեռնային աշխատանքների սահմանի հորիզոնի օպտիմալ արժեքը կազմում է 2243 մ:

Ատենախոսության վերաբերյալ առկա են հետևյալ դիտողությունները և առաջարկությունները:

1. Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական բացթողումներ (1180 կմ-ի փոխարեն պետք է լինի մ, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության փոխարեն՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության), ինչպես նաև որոշակի հնացած է ՀՀ պետական հաշվեկշռում հաշվառված հանքավայրերի մասին տեղեկատվությունը (Ճշգրտման կարիք ունի թե դրանց ընդհանուր քանակը, և թե մետաղական հանքավայրերի քանակը):

2. Հաշվարկների հիմքում դրվել է դեռևս 2011 թվականի տեխնիկատնտեսական ցուցանիշները, որոնց կիրառմամբ իրավացիորեն որոշվել է բաց և ստորգետնյա աշխատանքների սահմանը, մինչդեռ նպատակահարմար էր աշխատանքում տալ նաև Սոթքի հանքավայրի շահագործման արդյունավետության գնահատականը այն դեպքում, երբ ներկայումս բաց լեռնային աշխատանքների ստորին հորիզոնը գտնվում է 2130 մ նիշում:

3. Ցանկալի կլիներ աշխատանքում տալ թափոնային պոչանքների տեղավորմամբ հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակի կիրառման ազդեցության գնահատականը բաց և ստորգետնյա լեռնային աշխատանքների սահմանի վրա, ինչպես նաև աշխատանքում նշված չէ, թե առաջարկվող մշակման նոր համակարգի, որ հարկին է վերաբերում բաց և ստորգետնյա աշխատանքների հաշվարկված սահմանը:

4. Առաջարկվում է թափոնային պոչանքների տեղավորմամբ հանքավայրերի մշակման նոր համակցված եղանակի փորձնական կիրառման աշխատանքների իրականացման գաղափարը քննարկել Սոթքի ոսկու հանքավայրը շահագործող ընկերության հետ:

Ամփոփելով վերը շարադրյալը գտնում եմ, որ նշված դիտողությունները չեն ազդում կատարված աշխատանքի որակի վրա, իսկ ատենախոսությունը ունի գիտակիրառական մեծ նշանակություն, այն համապատասխանում է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ՀՀ ԲՈԿ-ի «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակը՝ Դավիթ Կարենի Պողոսյանը արժանի է «Օգտակար հանածոների հանքավայրերի մշակում և շահագործում»

(դասիչ ԻԴ.02.01) մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածու գիտնական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդիմախոս,
տեխ. գիտ. թեկնածու



Ս.Վ. Մամյան

Տեխ. գիտ. թեկնածու Ս.Վ. Մամյանի ստորագրությունը հավաստում եմ.
ՀՀ ՏԿԵՆ անձնակազմի կառավարման բաժնի պետ



Ն. Կիրակոսյան

23.06.2023թ.